

## **ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե**

### **Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 18/6**

**26 հուլիսի 2016թ.**

Քննարկվեց Ա/Ձ Միշա Հովհաննիսյանի գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետի 08.06.2016թ. թիվ 323398/08 որոշման դեմ:

#### **Ա/Ձ Միշա Հովհաննիսյանի գանգատում բերված փաստարկները.**

Միշա Հովհաննիսյանը հայտնում է, որ Կոտայքի տարածքային հարկային տեսչության իրավաբաններին ներկայացրել իր բոլոր հիվանդության ախտորոշման փաստաթղթերը, բայց նրանք միևնույնն է հիմնվում են ինչ-որ հոդվածների վրա հաշվի չառնելով մարդկային գործոնը:

Միշա Հովհաննիսյանը հայտնում է նաև, որ չի կարող ինտերնետի միջոցով հաշվետվություն ներկայացնել, չի հասկանում: Բացի այդ, իր աջ ձեռքը չի շարժվում, ոտքը նույնպես: Միթե հնարավոր չէ հաշվի առնել այդ հանգամանքը:

Ելնելով վերոգրյալից՝ Միշա Հովհաննիսյանը խնդրում է բեկանել ու չեղյալ համարել իր հանդեպ հարկային մարմինների կողմից կիրառված պատասխանատվությունը՝ գումարով 20.000 դրամ:

#### **ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետը, քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ 1490 գործը և ուսումնասիրելով վարչական իրավախախտման վերաբերյալ 08.06.2016թ. թիվ 1490 արձանագրությունը պարզել է, որ Ա/Ձ Միշա Հովհաննիսյանը «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետում չի ներկայացրել 2015թ. տարեկան եկամուտների պարզեցված հաշվարկը:

Նկատի ունենալով, որ արարքը նախատեսված է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.1-րդ հոդվածի 2-րդ մասով, ուստի ղեկավարվելով նույն օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով, 244.2-րդ, 281-րդ հոդվածներով և 282-րդ հոդվածի 1-ին կետով ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետի կողմից 08.06.2016թ-ին ընդունվել է վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 323398/08 որոշումը (այսուհետ նաև Որոշում), որով Ա/Ձ Միշա Հովհաննիսյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ գումարով 20.000 դրամի չափով:

Հարկ է նշել, որ «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հարկ վճարող ֆիզիկական անձինք պարտավոր են հարկային տարվա համար մինչև տվյալ տարվան հաջորդող տարվա ապրիլի 15-ը ներառյալ բացառապես էլեկտրոնային եղանակով հարկային մարմին ներկայացնել տարեկան

եկամուտների մասին հաշվարկ, իսկ ամբողջ հաշվետու տարվա ընթացքում օրենքով սահմանված կարգով ավելացված արժեքի հարկ վճարող չհամարված հարկ վճարողները՝ տարեկան եկամուտների մասին պարզեցված հաշվարկ (այսուհետ նաև՝ տարեկան եկամուտների մասին հաշվարկ):

Տվյալ դեպքում Ա/Ձ Միշա Հովհաննիսյանը ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետում չի ներկայացրել 2015թ. տարեկան եկամուտների պարզեցված հաշվարկը: Այսինքն՝ Ա/Ձ Միշա Հովհաննիսյանի կողմից թույլ է տրվել զանցանք, որի համար «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.1-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով ենթարկվել է վարչական պատասխանատվության:

Ինչ վերաբերվում է գանգատում բերված պնդումներին, որ ինտերնետին չտիրապետելու հետևանքով Ա/Ձ Միշա Հովհաննիսյանը չի կարող ինտերնետի միջոցով հաշվետվություն ներկայացնել, ինչպես նաև, որ ունի առողջական խնդիրներ, ապա Հանձնաժողովը գտնում է, որ բերված փաստարկները չեն կարող դիտվել որպես վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք և հիմք հանդիսանալ նրան վարչական պատասխանատվությունից ազատելու համար:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

### **ո Ր Ո Չ Ո Ւ Մ Է՝**

ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետի 08.06.2016թ. թիվ 323398/08 որոշումը թողնել անփոփոխ, իսկ գանգատը մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել տեսչա կան մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

**Հանձնաժողովի նախագահ՝**



**Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ**